

ՊԵՏՄԵ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅՈՑ ԱՆՁՆԱԴԱՐԱՆՆԵՐԸ

ԱՆՁՆԱՆՈՒՆԸ այն զլխաւոր միջոցներից մէկն է, որով համայնքը կամ հասարակութիւնը զանազանում է իր անդամներից այս կամ այն անհատին՝ միւս անհատներից: Այդ միջոցը աւելի է բնորոշւում կամ զարգանում, երբ անձնանունն վրայ աւելանում է մի մականուն, կամ հայրանունը, կամ ազգանունը և կամ այդ բոլորը միասին: Կարող ենք ասել պարզապէս Վահան, աւելի ձեռած՝ Դայլ Վահան, կամ Վահան որդի Հայկեայի և կամ Վահան Մամիկոնեան, և այլն:

Մարդկային հասարակութեան մէջ չկա

թէ կուզ ամենավայրենի մի ցեղ, որի անդամները անձնանուն չունենան: Անձնանունը համաշխարհային մի երևոյթ է:

Շատերը կարծում են և կամ ա՛յնպէս են հաւատացած թէ անձնանունները ծագում չունեն, այսինքն աննշանակ ձայների են, և կամ աւելի գրեական ձևով արտայայտւելով՝ արմատական բառեր են: Այս կարծիքը առաջացել է նրանց մէջ հասարակ անունների համեմատութեամբ: Ինչպէս որ սեղան, ջուր, արեւ, փայլ, ծառ բառերը արմատ են և մենք միջոց չունենք վերածելու նրանք իրենց մասերին, նոյնպէս են համարւում նաև անձնանունները:

2. — Անսառ նորագոյն Մսամանց, Աղէքսանդր Գալաթիոյ, 1773ին. — Կար. թ. 45:

3. — Պատմութիւն ժողովոյ, 1774ին, Զեռ. Պալաթու Ս. Հրեշտակապետ Եկեղեցւոյն. — Բանասէր, 1904 էջ 90:

4. — Մեկնութիւն Հնգամասեցի, Վարդան վարդապետի, 1779ին. — Զեռ. Ս. Թ. 275:

5. — Մեկն. Երգոց Երգոյն, Վարդան վարդապետի, 1780ին. — Ս. Թ. 275:

6. — Մեկնութիւն Մասրեոսի, Ներսէս Շնորհալիի և Թ. Երզնկացիի, 1781ին. — Ս. Թ. 275:

7. — Խօսք յինն Երանութիւնն, Գրիգոր Նիւսացւոյ, 1783ին: Զեռագիրը կը գտնուէր Երբեմն յԱրմաշ. — Հասկ, Հայդ. Տարեգիրք, 1948 էջ 74:

8. — Հաւաքածոյ մը, որ կը պարունակէ Յովհաննէս քահանայի Յաղագս Անկիւնուոր Թուոց աշխատութիւնը, 1786ին: Զեռագիրը կը գտնուի Երեւանի Պետական Մատենադարանին մէջ, թ. 2595. — Էջմիածին, 1950, Մարտ-Ապրիլ, էջ 55:

9. — Բարեզգիւր Նալեան Եկեղեցի Պատրիարքի, 1788ին, Ս. Երուսաղէմի Միա-

բան Պաղտատար վարդապետի համար. — Զեռ. Ս. Թ. 1791:

ԻԲ. — ՀԵՂԻՆԷ ԱՊԱՇԽԱՄՈՂ, Ժամանակը և տեղը անյայտ: Օրինակած է բուրդրով մէկ Մեկն. Ղուկասու, Իզնատիոս վարդապետի. — Կար. թ. 1295:

ԻԿ. — ՅՈՒՍԻՍԱՆԷ ԿՈՅՍ, Ժամանակը և տեղը անյայտ: Օրինակած է բուրդրով Անատոս քահանայի, Ժամագիրք, և Աղօթ Եփրեմ Խ. Ասորւոյ. — Կար. թ. 22:

Այս վերջին երկու գրչուհիները հաւանաբար կը պատկանին ժէ. դարուն: Այսպէս կ'ենթադրենք նկատի առնելով բոլորգրի գործածութիւնը և ժէ. դարու մշակութային լայն աշխատանքները:

ԻԴ. — ՄԱՐԻԱՄ ԳՐԻԶ, ըստ Յուդակազարդին ժէ. դարուն օրինակած է մէկ Բարեզգիւր Գր. Տաթևացւոյ, բուրդրով. — Էջմիածին, 1951, Ապրիլ-Յունիս, էջ 84: — Այդ դարուն ծանօթ են երեք Մարիամներ, առաջինը թ. և ժ. Թ. թէ առնցմէ մին է կամ ուրիշ անձ մը, առ այժմ կը մնայ անորոշ:

Ն. ԵՊՍ. ՄՈՎԱԿԱՆ

Միխայիլ, Տիգրան, Երուանդ, Թադևոս, Յովսէփ և այլն:

Այս կարծիքը ճիշտ է: Հասարակ աշունհները մէջ կան և պէտք է որ լինեն արմատներ կամ արմատական բառեր, բայց աշունհները մէջ չկայ արմատական բառ: Բոլոր յատուկ աշունհները, լինեն նրանք մարդու թէ տեղի (լիրան, ծովի, լճի, գետի, քաղաքի գիւղի և այլն), կադմուս են հասարակ գոյականներից և են բարդ կամ անորոշ բառեր: Ուրիշ խոսքով՝ ամէն յատուկ աշունհ մի բառ է, նշանակութեամբ օժտուած հասարակ աշունհ:

Մեր հասարակութեան մէջ այս սխալ կարծիքը առաջացած է յատկապէս այն պատճառով, որ մեր ամբողջ շրջապատը լցւած լինելով անթիւ անհամար օտար աշունհներով, որոնց իմաստը անծանօթ է մեզ, ենթադրում ենք թէ աշունհները առհասարակ անիմաստ ձայններ են:

Թէ ինչպէս կարելի է իմանալ թէ այսպիսի աշունհը հայկական է թէ օտար, պէտք է զիմել ստուգաբանութեան: Եթէ մի որեւէ աշունհ մեզ համար և մեր լեզուով որեւէ իմաստ տալիս է, ուրեմն հայկական է. իսկ եթէ ոչինչ չի նշանակում ուրեմն օտար է: Այսպէս օրինակ՝ Ասուածասուր, Խաչասուր, Տիրասուր, Հրաչեայ, Վարդգէս, Նորայր, Ժիրայր, Հրայր, Մարգար և այլն հայկական աշունհներ են, որովհետեւ հայերէն են և հայերէնով մի բան նշանակում են: Ասուածասուր նշանակում է Աստուծոյ տուածը, Խաչասուր՝ խաչի տուածը, Տիրասուր՝ Տիրոջ տուածը, Հրաչեայ՝ հրային աչքեր ունեցող, Վարդգէս՝ օրի գէտը, այսինքն մազերը վարդի նման են, Նորայր՝ նոր այր, նոր մարդ է, Ժիրայր՝ ժիր այր, ժիր մարդ է, Հրայր՝ հուր այր, այսինքն կրակէ մարդ է, Հրանդ՝ հուր է անդ, այնտեղ՝ սրտում կրակ կայ վառուած, Մարգար՝ մի մարգարէ է, ապագայի գուշակ և այլն:

Իսկ Պետրոս, Պողոս, Լեւոն, Գուրգէն, Գրիգոր, Փիլիպպոս, Արզուման, Ռուբէն, Ալավերդի, Սեբեֆեթիմ և այլն հայերէնի մէջ ո՛չ մի իմաստ չունեն, հետեւաբար հայկական աշունհ չեն: Նրանք օտար աշունհներ են և իւրաքանչիւրը պատկանում է այն ազգին, որի լեզուով ստուգաբանում է կամ որից որ առնուած է: Պետրոս յունարէն է

և յունարէնում Πέτρος նշանակում է քար:

— Պողոսը լատիններէն է և լատիններէն paulus կամ paullus նշանակում է փոքրիկ:

— Լեւոն յունարէն և լատիններէն է. այս երկու լեզուով Leo, Læon նշանակում է առնիւծ:

— Գուրգէն պահլաւերէն կամ պարսկերէն է և պարսկերէն կամ պահլաւերէն gurg, gurgen նշանակում է գոյլ, փոքրիկ գոյլ:

— Գրիգոր յունարէն է և յունարէն Γρηγόριος նշանակում է արթուն:

— Փիլիպպոս յունարէն է, որովհետեւ ծագում է յունարէն Ֆիլո (սիրելի) և իպպոս (ծիր) բառերից և նշանակում է «ծիրասէր», ձի սիրող:

— Արզուման պարսկերէն յատուկ աշունհ է, որովհետեւ ծագում է պարսկերէն արզումեն փափաքող, ցանկացող բառից:

— Ալավերդի տաճկական աշունհ է, որովհետեւ ծագում է Ալան (սևասուած) և վերդի (սուեց) բառերից:

— Ռուբէն երբայցերէն է և երբայցերէն rau ben նշանակում է օտն, որդի:

— Սեբեֆեթիմ ասորերէն է և այս լեզուով sin ahhe eriba նշանակում է Աստուած եղբայրներս չատացրեց:

Իզական աշունհները արականներից այն առաւելութիւնն ունեն, որ նրանց մէջ հայկականները համեմատաբար աւելի շատ են:

Այսպէս օրինակ՝ հայկական ծագում ունեն Սիրանու, Մաքունի, Տիրունի, Թագունի, Սեբունի, Իսկունի, Յասմիկ, Մանիւակ, Վարդունի, Լուսնբաղ, Մայրանու, Համապիւռ, Երանիկ, Արմենունի, Արալոյս, Արեւհա, Արեգնազան, Նազնիկ, Վարսնիկ, և այլն, և այլն:

Իզական աշունհների այս զրական կողմը, սակայն, մի բացասական երևոյթի արդիւնք է — հին հայոց մէջ կնոջ աշունհը տալը ամօթ էր համարուած, և փոխանակ կնոջ իր սեփական աշունհով կոչելու, ասում էին ասյոնչի աղջիկը:

Սրանից են առաջացել Տիգրանունի, Խոսրովիլուխ, Սանականու, Սմբասունի, Սմբասանու և այլն, որոնք ո՛չ թէ իրապէս աշունհ են, ինչպէս կարծում ենք սխալմամբ, այլ նշանակում են օճիգրանի աղջիկը:

Սրանից են առաջացել Տիգրանունի, Խոսրովիլուխ, Սանականու, Սմբասունի, Սմբասանու և այլն, որոնք ո՛չ թէ իրապէս աշունհ են, ինչպէս կարծում ենք սխալմամբ, այլ նշանակում են օճիգրանի աղջիկը:

Սրանից են առաջացել Տիգրանունի, Խոսրովիլուխ, Սանականու, Սմբասունի, Սմբասանու և այլն, որոնք ո՛չ թէ իրապէս աշունհ են, ինչպէս կարծում ենք սխալմամբ, այլ նշանակում են օճիգրանի աղջիկը:

Սրանից են առաջացել Տիգրանունի, Խոսրովիլուխ, Սանականու, Սմբասունի, Սմբասանու և այլն, որոնք ո՛չ թէ իրապէս աշունհ են, ինչպէս կարծում ենք սխալմամբ, այլ նշանակում են օճիգրանի աղջիկը:

Սրանից են առաջացել Տիգրանունի, Խոսրովիլուխ, Սանականու, Սմբասունի, Սմբասանու և այլն, որոնք ո՛չ թէ իրապէս աշունհ են, ինչպէս կարծում ենք սխալմամբ, այլ նշանակում են օճիգրանի աղջիկը:

Սրանից են առաջացել Տիգրանունի, Խոսրովիլուխ, Սանականու, Սմբասունի, Սմբասանու և այլն, որոնք ո՛չ թէ իրապէս աշունհ են, ինչպէս կարծում ենք սխալմամբ, այլ նշանակում են օճիգրանի աղջիկը:

Սրանից են առաջացել Տիգրանունի, Խոսրովիլուխ, Սանականու, Սմբասունի, Սմբասանու և այլն, որոնք ո՛չ թէ իրապէս աշունհ են, ինչպէս կարծում ենք սխալմամբ, այլ նշանակում են օճիգրանի աղջիկը:

Սրանից են առաջացել Տիգրանունի, Խոսրովիլուխ, Սանականու, Սմբասունի, Սմբասանու և այլն, որոնք ո՛չ թէ իրապէս աշունհ են, ինչպէս կարծում ենք սխալմամբ, այլ նշանակում են օճիգրանի աղջիկը:

Սրանից են առաջացել Տիգրանունի, Խոսրովիլուխ, Սանականու, Սմբասունի, Սմբասանու և այլն, որոնք ո՛չ թէ իրապէս աշունհ են, ինչպէս կարծում ենք սխալմամբ, այլ նշանակում են օճիգրանի աղջիկը:

Սրանից են առաջացել Տիգրանունի, Խոսրովիլուխ, Սանականու, Սմբասունի, Սմբասանու և այլն, որոնք ո՛չ թէ իրապէս աշունհ են, ինչպէս կարծում ենք սխալմամբ, այլ նշանակում են օճիգրանի աղջիկը:

Սրանից են առաջացել Տիգրանունի, Խոսրովիլուխ, Սանականու, Սմբասունի, Սմբասանու և այլն, որոնք ո՛չ թէ իրապէս աշունհ են, ինչպէս կարծում ենք սխալմամբ, այլ նշանակում են օճիգրանի աղջիկը:

Սրանից են առաջացել Տիգրանունի, Խոսրովիլուխ, Սանականու, Սմբասունի, Սմբասանու և այլն, որոնք ո՛չ թէ իրապէս աշունհ են, ինչպէս կարծում ենք սխալմամբ, այլ նշանակում են օճիգրանի աղջիկը:

Ձանգեզուրի գիւղերում կանայք և օրիորդները կոչուում են նոյն ձևով. «Բալասանի աղջիկ», փոխանակ ասելու Արուսեակ հայն: Երևոյթը շատ տարբեր է և բազմաթիւ երկիրներէ յայն սովորութիւնից, որով ամէն մի օրիորդ իր հօր ազգանունով և ամէն մի կին իր ամուսնու ազգանունով է կոչուում, առանց իր ծննդական անունը յիշատակութեան: Ֆրանսացւոյ մէջ կոչելու անունը տալը ամենամեծ անարգանքն է. այդպէս են կոչուում միայն փողոցային կանայք: Այս պատճառով է ահա, որ մեր հին մատենագրութիւնն էլ չափազանց ժխտ է իզական անուններէ վերաբերմամբ: Հայոց պատմութեան մէջ իզական անուն չկայ: Այս բացառական երևոյթի գրական արդիւնքն այն եղաւ, որ երբ անցեալ դարի կէսին սկսեց հայկական ինքնագիտակցութեան զարթոնումը, հայկական իզական անուններ չունենալու պատճառով՝ ազատ ասպարէզ բացուեց բառակերտութեան և սկսեցին յօրինել ամէն տեսակի իզական նորանոր անուններ:

Հայոց մէջ բուն հայկական անուններէ զգալի մասը օտար է: Համարեա նոյն դրութեան են նաև մեր շրջակայ աղգերը: Այսպէս, ուսանելի մէջ զուտ ուսական կամ պաշտական ծագումն ունեցող Վսեվոլոդ, Վլադիմիր, Սվյատոսլաւ, Յարոսլաւ, Լիւդմիլա և այլ անուններէ կողքին կան՝ Իվան, Սեբեյ, Նիկոլայ, Դիմիտրի, Ալեքսանդր, Պյոտր, Պաւել, Սեբաստիան, Յակով, Խրիստաֆոր և այլն օտար անունները: Պարսիկներէ մէջ բնիկ իրանական անուններ այժմ շատ քիչ են, այսպէս՝ Խուսրու, Գուրգեն և այլն: Իսկ Անուկ, Ալի, Հասան, Հիւսէյն, Սուլթան և այլն օտար են: Այսպէս է նաև տաճիկներէ, վրացոց, քրդերէ մէջ:

Այսպէս չեն սակայն արարները, հրեղիները, չինացիք, երբայցիք, չէին նաև հին յոյները, լատինները և այլն: Արարական բոլոր անունները՝ Ալի, Օսման, Օմար, Հասան, Հիւսէյն, Աբբաս և այլն զուտ արարական են և արարեալն լեզուով ունեն իրենց իմաստը. Ալի նշանակում է բարձր, Հասան նշանակում է զեղեցիկ, Հիւսէյն՝ սիրունիկ, և այլն: Հնդկներէ բոլոր անունները հնդկերէն են և նրանց մէջ օտար անուն չկայ: Չինական անունները միշտ եռաբանակ են, ինչպէս օրինակ՝ Կոն Ֆու-ցի,

Լի Հուցի-չանցի, Սուց Հան-ցեն և այլն. որոնց մէջ առաջին վանկը ազգանունն է, միւս երկուսը՝ անուն և հայրանուն:

Սեփական կամ օտար անուններ ունենալու երևոյթը կապուած է սեփական կրօն ունենալու փաստի հետ: Երբայցիքն ունի իր սեփական կրօնը, որ է Մովսիսականութիւնը և պահում է իր սեփական անունները՝ Մովսես, Աբրահամ, Իսահակ, Դաւիթ, Սողոմոն և այլն: Արար բուն իր սեփական կրօնը, որ է Մահմետականութիւն և պահում է իր արարական անունները: Հնդկը, չինացին ունեն իրենց սեփական կրօնները՝ Բահմականութիւն, Բուդդայականութիւն, Կոնֆուցեականութիւն, Լաոցեականութիւն և այլն, ուստի և պահում են իրենց սեփական անունները: Իսկ այն աղգերը, որոնք ընդունել են մի ուրիշ ժողովրդի կրօնը, ընդունել են նաև նրանց անունները: Տաճիկները, քրդերը, աֆղանները ընդունել են Մահմետականութիւնը, որ արարների կրօնն է, ուստի սեփական անուն չունեն. նրանց անունները բոլոր արարեալն են: Պարսիկները, հին ժամանակ, երբ հետեւում էին իրենց սեփական Զրադաշտական կամ Մազդեզական կրօնին, ունէին զուտ պարական (իրանական) անուններ. Իսկ այն օրից երբ ընդունեցին Մահմետական կրօնը, և մինչև այժմ, զործ են ածում միայն արարական անուններ: Այս կողմից հետաքրքիր օրինակ են տալիս փարսիները, այն է՝ Պարսկաստանի և Հնդկաստանի արդի կրակապաշտ պարսիկները, որ մինչև այսօր պահում են անաղարտ հին պարսկական (իրանեան) անունները:

Եւրոպան հնապէս երկու բաժին ունէր. հիւսիսը և արևելքը բարբարոս էին, իսկ հարաւն ու արևմուտքը բունում էին յոյներն ու հռոմէացիք, որոնք շատ հին և շատ առաջադէմ մշակոյթ էին ստեղծել: Այս երկուսն էլ ունէին իրենց սեփական անունները. յոյները՝ զուտ յունարէն և հռոմայեցիք՝ զուտ լատիներէն: Մեզանից 1900 տարի առաջ, այս երկու աշխարհներում սկսեց քարոզուել Քրիստոնէութիւնը, որ վերջապէս ընդհանուր կրօն դարձաւ ու տիրապետեց ամբողջ Եւրոպայում և Ասիայի արևմտեան մասում, Սպանիայից մինչև Հայաստանի արևելեան սահմանը:

Երբ յոյները և լատինները ընդունեցին

Քրիստոնէութիւնը, Աւետարանի հետ պիտի ընդունէին նաև Հին Կտակարանը, որ Քրիստոնէութեան պատուանդանն էր կազմում և հրեաների սրբազան մատեանն էր: Այս պատճառաւ էլ հրէական այն անունները որոնք սովորական էին Հին Կտակարանի մէջ, գործածական դարձան նաև յոյների և լատինների մէջ: Բայց յոյները և լատինները ունենալով նաև սեփական մեծ քաղաքակրթութիւն, հարուստ լեզու և մեծահարուստ հին գրականութիւն, չկարողացան հրաժարուիլ այս բոլորից, և նորի հետ պահեցին նաև հինը: Այսպիսով Քրիստոնէութեան մէջ ընդունուեցին մի կողմից հրէական (երբայական) և միւս կողմից յունական և լատինական անունները: Եւ այն բոլոր ազգերը (հայ, վրացի, ռուս, գերմանացի, հունգարացի, անգլիացի և այլն), որոնք ընդունեցին յունա-լատինական Քրիստոնէութիւնը, ընդունեցին նաև հրէական, յունական և լատինական անունները: Ուր որ կային հին կեանքի սեփական անուններ, մեծագոյն չափով ջնջուեցին՝ իբրև կապալառութեան մնացորդ, տեղի տալով նոր կրօնի՝ Քրիստոնէութեան բերած յոյն-լատին և երբայական անուններին:

Այժմ մասնաւորեմք մեր խօսքը հայոց գործածած անունների մասին:

Ո՛չ մի բան այնքան հաւատարիմ կերպով չի ներկայացնում մեր պատմական կեանքի զանազան ելևէջները, մեր կրած ազդեցութիւնները օտար ժողովուրդներից, ինչպէս և մեր ներքին ձգտումները, որչափ յասուկ անուցները:

Մենք գիտենք որ յատուկ անունները երկու տեսակ են. տեղանուններ և անձնանուններ: Տեղանունները աւելի յարատեւ, հաստատուն և տեական բնոյթ ունեն քան անձնանունները: Որեւէ լեռ, լիճ, ծով ու գետ մշտնջենական կեանք ունի. որեւէ քաղաք կամ գիւղ հարեւաւոր ու հազարաւոր տարիների կեանք ունի: հետեաբար և նրանց անունը ընդհանրապէս մնայուն և տեական է: Բայց անձերի կեանքը առ առաւելն մի գարն տեղութիւն ունի: Անցնում է սերունդը, փոխում են զազափարները, փոխում են ազդեցութիւնները և անուններն էլ նրանց հետ միասին անհետանում են, տեղի տալով նորանոր ձևերի:

Անձնանունների տեականութիւնը որոշ

չափով կախում է մի քանի հանգամանքներից, որոնք են՝

1. Բառի կարգութիւնը. — Ձափազանց երկար անունները շուտ են մոռացում կամ գոնէ այնքան են կրճատում որ այլևս անձանաչելի են դառնում. — Արեղնագով, Ագարանգեղոս իրենց երկարութեան պատճառով յաջողութիւն չեն գտել կամ շուտ են մոռացուել: Առաջինի չափ երկար է Ասուածասուրը, որ թէև շատ սովորական անուն է, սակայն ո՛չ մի տեղ չէ պահուած իր բուն ձևով, այլ զանազան կրճատումներով դարձել է՝ Աասուր, Ասուր, Ասիկ, Ասո, Մասուր, Մաւի: — Առհասարակ սիրելի են երկազանկ անունները. երկուսից աւելի վանկ ունեցող անունները կրճատում են. սրա համար է որ Մարտիրոսը դառնում է Մարսո, Մրսո, Մարտիկ. — Մկրտիչը դառնում է Մկր, Մկո, Միկիս, Միկիչ, Մուկուչ. — Հռիփսիմէն դառնում է Հոռոփ, Հոռոմ, Հոռի. — Եղիափեբը դառնում է Եղիս, Ելաս, Ելաս, Ապեբ, իսկ եւրոպական լեզուները մէջ էլ՝ Էլիզ, Էլիզա, Լիզա, Իզաբելլա, Զաբէլ, Բելա և այլն:

2. Բառի ներդաշնակութիւնը. — Իւրաքանչիւր ազգի և ժողովրդի գեղարուեստական ճաշակի համաձայն՝ խժաւուր և տղեղաձայն համարուած անունները բնականաբար շուտով ջնջուում են, իսկ ախորժելի հնչիւն ունեցող անունները միշտ աւելի են փնտռուում:

3. Նշանակութեան գեղեցկութիւնը. — Անիմաստ կամ տղեղ համարուած մի անուն աւելի շուտ է հնանում և քաշում ասպարէզից, քան թէ նշանակութեամբ գեղեցիկ մի անուն. — Վարդուհի շատ հին անուն է. գոյութիւն ունէր հինգերորդ դարում. Յիշուում է Յայմատուրքի մէջ և դեռ երկար պիտի ապրի: Այսպէս նաև Շուշան կամ Շուշանիկ: Նոյնչափ ախորժելի են Մանիբակ, Սիրանուշ, Հրանուշ, Վարսենիկ և այլն, մինչդեռ Ազապի, Եւպրատի, Հեղինէ, Կասարիէ մոռացուած ու անհետացող անուններ են արդէն:

4. Այն հանգամանքը, որ պատահաբար այն անունը կրող անձերը եղել են նշանաւոր և անմոռանալի մարդիկ, պատճառ է դարձել, որ այն անունները երկար ապրեն. այսպէս՝ Աբգար, Վարդան, Հայկ, Ներսէս, Սահակ, Մեսրոպ անմոռանալի ա-

ԿՐԹԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԻ ՄԸ ԱՌԻԹՈՎ

Գալիձորնիոյ Հայ Կրթական Հիմնարկօրինը ասկէ առաջ, նուազ ծանօթ էր մեզի, սակայն վերջերս մեզի հասած պրօշիւրէ մը աւելի լայն կերպով տեղեկ դարձած ենք իր գործունէութեան: Կրթանուէր եւ ազգանուէր գործունէութիւն մը, որուն համար ալ կ'ուզենք ՍԻՈՆ-ի էջերէն ծանօթ դարձնել զայն որքան կարելի է լայն շրջանակներու, ոչ միայն ի Բաջալեւրութիւն կազմակերպութեան ազնիւ ձեռնարկողներուն, այլ մանաւանդ ներկայացնել զայն իբրեւ քննադէպ օրինակ ուրիշներու, որոնք իրենց ներակային ու ժամանակին ապարդիւն վստահութեամբ չեն մտածեր վերածել օգտակար արդիւնքի:

Անմիջապէս Կրթութիւն կը ներկայացնեն Սփիւռքի մեր վարժարանները մասնաւորաբար Սիւրիոյ, Լիբանանի, Յունաստանի եւ այլ կարգ մը վայրերու մէջ, ներակայ եւ երբեմն իմացական կարելիութեանց պակասին համար: Նոյնքան դժբախտութիւն մը կը պարզեն ուսանող-փոքրիկները երբեմն յետին չափաւորութեան մէջ հալածման դարձած: Իւրաքանչիւր հայ արեւի միւլումով միայն կր-

նայ ոտ գնել այդ Հաստատութիւններէն ներս:

Կրթական մարզին մէջ Հայ-Սփիւռք մասնաւորապէս երկու հակադիր դրութիւններու: Մասնաւորաբար Սիւրիա, Լիբանան, Յունաստան, Յորդանան եւ բացի Ամերիկայէն, հայաշատ այլ վայրեր, ունին ուսանողութիւն, առաջ բաց ճանապարհ տանք խեղճ պայմաններու տակ զրկուած կրթական լաւագոյն կարելիութիւններէ: Մինչ Սփիւռքի մէկ այլ հաստատութիւն, քեզ հաճուիս ներակայ պայմաններով՝ սակայն զուրկ է տրամադիր աւակներուց: Արդեօք կարելի չէ՞ր այս երկու դրութիւնները միացնելով՝ ստեղծել զէք Սփիւռքի հայ կարօտ ուսանողութեան համար կրթական լաւագոյն պայմաններ:

Այս ուղղութեամբ արդէն իսկ սկսած են դրապէս մտածել կարգ մը ամերիկացի կազմակերպութիւններ, ինչպէս Հայկ. Բարեգործական Ընդհ. Միութիւնը, Կիւլլապի Կիւլլապիական Հիմնարկութիւնը, Վարդանանց Ասպետները, զանազան հայրենակցական միութիւններ եւայլն:

Այս կազմակերպութիւններու կարգին

նուններ են, որովհետեւ մեր պատմութեան մէջ ունեցել ենք այս անուններով կոչուած նշանաւոր անձնաւորութիւններ. իսկ Վասակ, Յուդա, Մերուտան մեռած, անգործածելի անուններ են, որովհետեւ այս անուններով գտնուած են նշանաւոր մատենիչներ և դաւաճաններ: Անունը ինքնին այստեղ նշանակութիւն չունի. Վասակ բառը ինքնին աւելի գեղեցիկ է քան Վարդանը. բայց ուրացող Վասակի վատ յիշատակը մոռացնել է տուել այդ անուան գեղեցկութիւնն ու ներդաշնակութիւնը:

5. Կրօնական կամ ազգային գաղափարներ. — Սրանք ժամանակի բերումներն են. կար ժամանակ՝ երբ կրօնական զգացմունքը կեանքի գլխաւոր վարիչն էր. այն ժամանակ անունները աւելի կրօնական էին, ինչպէս Աստուածասուր, Թորոս, Կիրակոս, Մարկոս, Ղուկաս, Մաս-

թեոս, Պետրոս, Պօղոս եւայլն: Կրօնական զգացմունքը անցաւ գնաց և տեղի տուեց զուտ ազգային շրջանին: Դա էր անցեալ դարի կէտին: Այն ժամանակ կրօնական անունները այլևս անախորժ դարձան և նրանց տեղ սկսեցին հայ ազգային անունները — Վարդան, Սեւակ, Զարեհ, Գուրգէն, Արսաւես, Հրաչեայ, Զարմայր, Պարոյր եւայլն:

Եթէ ուզենանք հայ անձնանունները դասաւորել իրենց ուրոյն խմբերով և ներկայացնել այն ազգեցութիւնները, որոնց ենթարկուած են նրանք մեր հնագոյն շրջանից սկսած մինչև այսօր, կը տեսնենք որ նրանք կազմուած են 15 խումբ, որ համապատասխանում են 15 շրջանի, որոնք հետեւեալներն են՝ ժամանակագրական կարգով:

ՊՐՈՖ. Զ. ԱՃԱՌԵԱՆ

(Շարունակել)